ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Ք.Ա. IV – Ք.Ծ. V ԴԴ.)» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Է.00.01 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունների հիմնահարցը հիմնականներից մեկն էր Մեծ Հայքի թագավորության գոյության շրջանում՝ թե՛ մինչքրիստոնեական պատմափուլում և թե՛ քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունելուց հետո, երբ այդ հարաբերությունները կրեցին բովանդակային փոփոխություններ: Այդ հարաբերությունների բազմաթիվ դրվագներ թեև դարձել են հետազոտողների քննության առարկա, սակայն մինչ օրս դրանց ամբողջական, համակարգային քննություն չի իրականացվել:

Ասվածի համատեքստում հույժ արժևորվում է սույն ատենախոսության ի հայտ գալը, որն ընդգրկում է Մեծ Հայքի թագավորության ժամանակաշրջանը՝ իր երկու՝ մինչքրիստոնեական և քրիստոնեական պատմաշրջաններով:

Հայկարամ Հակոբի Հակոբյանի՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում (Ք.ա. IV – Ք.ծ. V դդ.)» խորագրով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության հիմնական նպատակը Մեծ հայքի թագավորության շրջանում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների բազմաշերտ փոխհարաբերությունների լուսաբանումն է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից. ընդհանուր առմամբ՝ 176 էջ:

Խնդրի քննությունը հեղինակը մեկնարկել է (Գլուխ Ա. Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը մինչարտաշեսյան շրջանում) Ք.ա. 3-րդ հազարամյակից՝ ներկայացնելով խնդրո առարկա հարաբերությունների բնույթը

մինչարտաշոսյան, այն է՝ նահապետական, վաղ պետական կազմավորումների և Վանի թագավորության ժամանակաշրջաններում: Վերջիններս ընդգրկող գլխում հեղինակը ներառել է նաև ատենախոսության խորագրի շրջանակի բուն տեքստին պատկանող՝ Ք.ա. IV-III դդ. պատմաշրջանը:

Երկրորդ գլխում («Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում Ք.ա. II-I դարերում») հեղինակի պրպտումների առանցքում Արտաշեսյանների դարաշրջանն է, երբ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխահարաբերությունների քննարկումը հեղինակը կատարում է հելլենիստական երկրներում նույն այդ փոխհարաբերությունների առանձնահատկությունների ներկայացման հենքի վրա: Կատարվել է բավականին հաջող համեմատական վերլուծություն:

Երրորդ գլխում («Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում Ք.ա. I-III դարերում») հեղինակը խոսել է խնդրո առարկա հարաբերությունների՝ Արշակունյաց դարաշրջանի մինչքրիստոնեական պատմափուլի առանձնահատկությունների մասին:

Ատենախոսության չորրորդ գլխում («Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում 301-428 թթ.) հեղինակն անդրադարձել է արդեն քրիստոնեության, որպես պետական կրոն ընդունման առաջին մեկուքարորդ դարի իրողություններին, երբ հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները լի էին հակասություններով, պայքարով գերակայության համար: Հատկապետ հիշատակելի է ատենախոսի կատարած քննությունը հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների վերաբերյալ ըստ Հին ու Նոր Կտակարանների մոդելների:

Ատենախոսության եզրակացությունները բխում են հեղինակային վերլուծությունից, հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության աղբյուրային հենքը լիովին բավարար էր արդյունավետ և բովանդակային վերլուծություն կատարելու համար: Հեղինակն ըստ անհրաժեշտության անդրադարձել է նաև տարբեր հետազոտողների տեսակետներին, քննարկել դրանք՝ օժտելով բոլոր անհրաժեշտ հղումներով:

Ատենախոսության մեջ Հ. Հակոբյանի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հնարավորինս հիմնավոր են, օբյեկտիվ: Հեղինակը հանդես է բերել աղբյուրային և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, գիտական աշխատանք կատարելու էական ընդունակություններ, խնդիրներ սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ, որի արդյունքում մասնագիտական խորհրդի դատին է հանձնված արդյունավետ, ստացված ու կարևոր գիտական աշխատություն:

***

Հ. Հակոբյանի ատենախոսության վերաբերյալ իմ լիովին դրական կարծիքին զուգահեռ ներկայացնում եմ նաև մի քանի դիտողությունները:

1. Որոշակի չմշակվածության տպավորություն կա բովանդակության մեջ՝ կապված գլուխների և ենթագլուխների վերնագրերի ձևակերպման միօրինակության հետ: Օրինակ՝ բոլոր գլուխները և ենթագլուխների զգալի մասը (1.1-1.4, 2.1-2.2, 4.1-4.2) սկսում են «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը ...» բառերով: Այստեղ կարելի էր վերնագրերը շարադրել՝ ելնելով խնդրո առարկա փոխհարաբերության՝ այս կամ այն փուլում ունեցած առանձնահատկությունից, օրինակ՝ IV դ. ընթացքում հոգևոր և աշխարհիկ իշխանության փոխհարաբերություններում հաճախ առկա հակամարտային բովանդակությունից:

2. Զարմանալի է երրորդ գլխում ենթագլուխների բացակայությունը, երբ կար հնարավորություն առանձնացնելու առնվազն երկուսը՝ Արշակունիների հիմնավորման և ժառանգական իշխանության սկզբնավորման վերաբերյալ և այնուհետև՝ մինչև քրիստոնեության, որպես պետական կրոն ընդունումը:

3. Թեև ատենախոսության վերնագրում որպես թեմայի ժամանակագրական մեկնակետ է համարվում Ք.ա. IV դարը, սակայն բովանդակության մեջ դա հստակորեն առանձնացված չէ, ավելին, Ք.ա. IV դ. – II դարի սկիզբ ընկած հատվածը ներառնված է ատենախոսության առաջին՝ մուտքային նշանակության գլխում, որը, ըստ հեղինակի՝ «հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության պատմական հիմքի և ազդեցությունների լուսաբանման համար» է շարադրվել՝ ընդգրկելով Ք.ա. III հազարամյակից մինչև Արտաշեսյանների թագավորության սկզբնավորումն ընկած ժամանակահատվածը: Այսինքն՝ ատենախոսության հիմնական թեմայի բուն

շարադրանքի՝ Ք.ա. IV-III դդ. իրողությունները ընդգրկվել են ըստ էության պատմական ակնարկ հանդիսացող ներածական գլխում, թեև անհրաժեշտ էր դրանք ընդգրկել առանձին գլխում:

Իմ համոզմամբ, ատենախոսության վերնագիրը նախատեսում է գլուխների այնպիսի ժամանակաշրջանային բաշխում, որ հստակորեն կընդգրկեր Ք.ա. IV-Ք.ծ. V դարերը, սակայն ատենախոսության առաջին իսկ գլխի ժամանակային ընդգրկումը (մինչարտաշեսյան Հայաստանում առկա փոխհարաբերությունները հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև) ցույց է տալիս, որ հեղինակի համար թեմատիկ առաջնահերթությունը եղել է Արտաշեսի դարաշրջանից մինչև Արշակունիների անկումն ընդգրկող պատմաշրջանը, սակայն թեմայի տեսանկյունից Մեծ Հայքի թագավորության ամբողջական ուսումնասիրությունը համարվել է կարևոր, ուստի և մինչարտաշեսյան երկու դարերը ևս ընդգրկվել են ատենախոսության վերնագրում: Այստեղ կարելի էր գտնել ավելի արդյունավետ բովանդակային բաժանում:

4. Ատենախոսության առաջին երկու ենթագլուխներում [«Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության պատկերացումը ազգածին նահապետների մասին ավանդազրույցներում» և «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Հայաստանի վաղ պետական կազմավորումներում (Ք.ա. III-II հազարամյակներ)»] առկա խիստ համառոտ և գործնականում խնդրո առարկա հարաբերությունների լուսաբանման հարցում ոչինչ չհավելող նյութը կարելի էր պարզապես չընդգրկել ատենախոսության մեջ:

5. Թեև տեքստում որոշակի անդրադարձ կա մինչև 301 թվականը և դրանից հետո հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանության հարաբերությունների համեմատությանը, փոփոխություններին և առանձնահատկություններին, սակայն ավելի ճիշտ կլիներ այդ խնդիրը ներառել ատենախոսության նպատակին հասնելուն միտված հիմնական խնդիրների շարքը, իսկ տեքստում դրան անդրադառնալ առանձին ենթագլխով:

6. Ատենախոսության երրորդ գլուխը (էջ 81-93), որ պետք է ընդգրկեր խնդրո առարկա փոխհարաբերությունները I-III դդ., հասկանալի պատճառներով զուրկ է էական մանրամասներից: Հասկանալի պատճառները առնչվում են աղբյուրային նյութի բացակայությանը: ուստի կարելի էր երրորդ գլխի նյութը կցել չորրորդին և դարձնել նրա առաջին ենթագլուխը:

7. Ատենախոսության մեջ կան նաև խրթին, բացատրություն պահանջող, հայերեն համարժեքների կիրառման խնդիր կամ միօրինակության պահանջ առաջացնող ձևակերպումներ. «համեմատական մեթոդը օգտագործվել է ժամանակային և տարածքային ինտերվալի կտրվածքով» (էջ 6), «ազգածին նահապետներ» (էջ 17), «թեոկրատական կարգեր» (էջ 19), «հաստ պատերով կիկլոպյան ամրոց» (էջ 20), «...ինչը խոսում է երկրում թագավորի բարձր դիրքի մասին» (էջ 40), «բազմաստվածյան կրոնի ժամանակ» (էջ 41), «դինաստիա»-«հարստություն» (էջ 50, 65 և այլն):

Ասվածը, սակայն, էականորեն չի անդրադառնում ատենախոսության արժանիքների վրա: Դիտողությունները ատենախոսին օգտակար կլինեն հետագայում: Հ. Հակոբյանը կատարել է ուշագրավ աշխատանք, ակնհայտ է հեղինակի խոսքը, վերլուծական միտքը: Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, հեղինակի հրատարակած հոդվածներն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

***

«Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները, ներկայացնում եմ հետևյալը:

1. Հեղինակի տպագիր հոդվածները, դատելով վերնագրերից, արտացոլում են գլուխների բովանդակությունը:

2. Ատենախոսության թեման արդիական է:

3. Ատենախոսության մեջ առկա դրույթներն և եզրահանգումները հիմնականում հեղինակային են, իսկ փոխառված մտքերն ու դիտարկումները՝ պարտադիր հղված:

4. Ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու եզրահանգումները նոր և հիմնավոր են:

Այսպիսով՝ Հայկարամ Հակոբի Հակոբյանի «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում (Ք.ա. IV – Ք.ծ. V դդ.)» վերտառությամբ Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը

համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետին, գնահատվում է իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում:

Ասվածի հիմքով համարում եմ, որ Հայկարամ Հակոբի Հակոբյանը արժանի է իր հայցած՝ Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան

Պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ. Հ. Ղ. Մուրադյան

12.07.2020 թ.